

ինքնապաշտպանութեան վրայ, իսկ թուրքերը հարկւր տարուց աւելի է զինուած են: Գանձակում ամեն մի թուրքի տանը կը գըտնէք մի քանի ատրճանակ, հրացան, փամփուշտներ: Իսկ մենք... Հիմա էլ հայերը մի հարց են բարցրացրել, ուզում են ամբողջ բազարը քոչեցնել դէպի հայոց թաղը: Բազարում մեծամասնութիւնը անշարժ կայեքըրը թուրքերին է պատկանում. եթէ հայերը իրենց խանութները փոխադրեն մեր կողմը, նրանց կայքերի արժէքը կընկնի ու մեծ շէտա կունենան: Ահա ընդհանուր կերպով մեր դրութիւնը. տեսնում էք որ շատ էլ նախանձելի դրութիւն չէ: Նահանգապետին խնդրել են որ նա բերել տայ քաղաքումս յամենայն դէպս պահպանելու համար երկու հարիւր կազակ:

Վերջապէս կեանքի ու գոյքի կատարեալ անապահովութիւն. յոյսներս չը պէտք է ուրիշի վրայ դնենք. մենք ինքներս պէտք է մեզ պաշտպանենք: Երկիւղը մշտնջենական է. ամեն բոլոր կարող է ընդհարումն պատահել, որովհետև ղժբադատարայնալիսի մարդկանց հետ գործ ունենք, որոնք ոչ խելք ունին, ոչ զարգացողութիւն, ոչ հեռատեսութիւն. նրանց համար կեանքը արժէք չունի և 10 կոպէկի համար ամեն ինչ պատրաստ են անելու:

ՆՈՐԱՇԷՆՏԻ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՇՈՒՇԻ. Յ. Խանլարեան.— «Հարաւի այրին», «Ծաւալի պատկեր» և «Նաւակ» մեզանից անկախ պատճառներով չենք տպում:

ԲԱԳՈՒ. Մ Բ.— ստացանք Ձեր «Պարբերական մամուլը Արևմուտքում» գրութեան ատկիւն երեք մասերը:

ՀԱՂԷ. Յ. Բողեան.— Հէնրիկ Իբսէնի «Երբ մենք մահից յարութիւն առնենք». էպիլոգի հայ թարգմանութիւնը ստացանք:

ՋԱՆԳԵՉՈՒՐ. Գր.— Բալասանեան.— Ձեր ուղարկած յօդուածը ստացանք. արդեօք դուք Գրիգոր Բալասանը չէ՞ք— «Լումայի» նախկին աշխատակիցը. ցանկալի է որ իմանայինք:

ԱՆԱՊԱ. Մ. Շուտտ.— Ստացանք Ձեր ուղարկած թարգմանութիւնները. 1, Կ. Զգէխովսկու «Սարրա». 2, Ի. Լիի «Ֆինական արիւն» և 3, Պօտապէնկօի «Անիծեալ փառք»: Համաձայն մեր կանոնների՝ դուք պէտք է ուղարկէք նաև դոցա բնագիրները, այսպէս չեն կարգացուի:

ԿԱՐՍ. Կայծ.— Ձեր բանաստեղծութիւնները ստացանք. յարմարաւորները կտպուին. մանրամասնութիւնները կգրենք Ձեզ նամակով:

ԲԱԳՈՒ. Ա. Զանեան. Ձեր ուղարկած ոտանաւորները ստացանք:

Խմբագիր-Հրատարակիչ ԳԻՒՑ Ա. ԳԱՀ. ԱՂԱՆԵՆԱՆՑ